

**ՀՅԴ Վանաձորի կոմիտեի գրասենյակին
վերաբացումը տեղի ունեցավ հանդիսաւոր կերպով**



Կարդալ էջ 3

**Հանրապետութեան եւ Մայիսեան հերոսամարտերու
100-ամեակին նուիրուած զօրահանդէս Սարդարապատի մէջ**



Կարդալ էջ 3



Գանատայի Լաւալ Բաղաժին մէջ ծածանեցաւ եռագոյնը
Կարդալ էջ 5



ՀՅԴ-ն Միակամ է
Կարդալ էջ 3



ՀՕՄ-ի Լաւալի «Շուշի» մասնաճիւղի 25-ամեակի տօնակատարութիւն
Կարդալ էջ 5



ՀՅԴ ԳԵՄ-ի համագանատական տարեկան սեմինար
Կարդալ էջ 3



2018 PILOT

MSRP STARTING FROM \$40,390*

2018 PILOT SHOWN

* Taxes not included. Visit Honda Gabriel for more details.

HONDA GABRIEL

7000, boulevard Henri-Bourassa E.
Montréal-Nord, QC H1G 6C4

514 327-7777

www.hondagabriel.com

**Kevork Asadourian
Vahan Vartanian
Haig Khobassarian**



HONDA



The Essence of Mediterranean Gourmet



*Taste Wonderful
Taste Arz Fine Foods*



ARZ Fine Foods
1909 Lawrence Ave E, Scarborough, ON (416•755•5084), www.arzfinefoods.com

ՀՅԴ Վաճառորի կոմիտէի գրասենեակին վերաբացումը տեղի ունեցաւ հանդիսաւոր կերպով

Մայիս 27-ին հանդիսաւոր կերպով տեղի ունեցաւ Վաճառորի ՀՅԴ գրասենեակին բացումը: Գրասենեակը վերանորոգուած է Գանատայ Դաշնակցութեան կառոյցի ջանքերով: Գրասենեակի բացման մասնակցեցան մեծ թիւով սփւռ.քահայ դաշնակցականներ:

Գանատայի ՀՅԴ Կեդրոնական կոմիտէութեան ներկայացուցիչ Ռաֆֆի Տօնապետեան Yerkir.am-ի հետ զրոյցին մէջ տեղեկացուց, որ Վաճառորի գրասենեակի վերանորոգումը միակ նախաձեռնութիւնը չէ:

«Մինչ օրս առիթը ունեցած ենք հիմնովին վերանորոգելու Ալաւերտիի ՀՅԴ կեդրոնը, նաեւ առիթը ունեցանք նորոգելու Ստեփանաւանի կեդրոնի երիտասարդականի գրասենեակի բաժինը: Ստեփանաւանի ՀՅԴ կեդրոնը տակաւին ամբողջութեամբ չենք վերանորոգած: Հիմա Վաճառորի գրասենեակի բացումը եղաւ, կը նախատեսուի նաեւ Սպիտակի կեդրոնի բացումը: Ստեփանաւանի եւ Սպիտակի ՀՅԴ գրասենեակներուն մէջ տարուող վերանորոգման աշխատանքները տակաւին ամբողջացած չեն, պետք է ամբողջանան», յայտնեց ան:

Տօնապետեանի խօսքով՝ ՀՅԴ երիտասարդական միութիւնը կը փափաքի, որ Լոռիի մարզին մէջ յաւելլալ ճամբարներ եւ բանակումներ կազմակերպուին: «Այդտեղ եւս պէտք է օգտակար ըլլանք, որ Վաճառորէն դուրս ալ բանակումներ եւ ճամբարներ կազմակերպուին, օրինակ՝ Ստեփանաւանի, Սպիտակի մէջ», ըսաւ ան:

Իսկ թէ ինչո՞ւ Գանատայի ՀՅԴ կառոյցը միայն Լոռիի մարզին մէջ աշխատանքներ կը ծաւալէ, Տօնապետեան պատասխանեց, որ այդ ժողովի ժամանակ որոշուած է: «Որոշուած էր, որ Սփւռ.քի ՀՅԴ կառոյցները պէտք է «որդեգրեն» Հայաստանի մարզ մը կամ շրջան մը, մեզի Լոռիի մարզը բաժին ինկաւ», բացատրեց ան:

ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէի Լոռիի եւ Զաւարսքի շրջաններու օժանդակութեան եւ հանգանակութեան համակարգիչ յանձնախումբի անունով խօսք առաւ յանձնախումբի ատենապետ ընկ. Գաբրիէլ Մոմունճեան, որ շեշտեց, թէ այս յանձնախումբին գործունէութիւնը պիտի չսահմանափակուի հանգանակային ձեռնարկներով, այլ պիտի մշակուին այդ շրջաններուն մէջ կազմակերպական եւ հասարակական կեանքին վերաբերող ծրագիրներ: ՀՕՄ-ի անունով խօսք առաւ ընկճ. Հուրի Նաճարեան: Ծնորհակալական խօսքերով հանդէս եկան ՀՅԴ Լոռիի մարզային, Վաճառոր քաղաքի եւ Վաճառորի երիտասարդականի ներկայացուցիչները:



ՀՅԴ-ն Միակամ Է

ՀՅԴ Բիւրոյին հրաւերով մայիս 29-ին Երեւանի մէջ գումարուեցաւ ՀՅԴ Հայաստանի եւ սփւռ.քի կազմակերպութիւններու ղեկավար մարմիններու խորհրդակցական ժողովը:

Նոր իրողութիւններու լոյսին տակ ժողովը հանգամանալից քննարկման առարկայ դարձուց Հայաստանի ներքաղաքական իրավիճակը, կուսակցութեան վերջին երկամսեայ գործունէութիւնը, ինչպէս նաեւ անդրադարձ կատարեց հնարաւոր քաղաքական զարգացումներուն եւ յառաջիկայ կատարելիքներուն:

Ժողովը վերահաստատեց հայաստանակեդրոն գործունէութեան նոր թափ հաղորդելու՝ կուսակցութեան յանձնառութիւնը եւ իր ամբողջական զօրակցութիւնը յայտնեց ժողովրդական շարժման յաղթանակին մէջ կուսակցութեան մարմիններուն կողմէ որդեգրուած քաղաքական ուղեգծին:

Ժողովը արձանագրեց, որ հայոց պետականութեան հզօրացումն ու ամրապնդումը կը մնան համահայկական հիմնական օրակարգ եւ գերխնդիր թէ՛ հայրենաբնակ ժողովուրդին եւ թէ՛ սփւռ.քահայութեան համար:

Ժողովը արժեւորեց համաժողովրդական շարժման իբրեւ արդիւնք տեղի ունեցած վերազարթօնը՝ այն համոզումով, որ հայոց պետականութեան վերականգնման 100-ամեակին ընդառաջ անիկա իրապէս կ'իմաստաւորուի, եւ կ'ունենանք նոր սկիզբ, արդար եւ հզօր Հայաստան:

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱԾՆԱԿՑՈՒԹԻՒՆ
30 մայիս 2018

ՀՅԴ ԳԵՄ-ի համագանատական տարեկան սեմինար

Կազմակերպութեամբ ՀՅԴ Գանատայի երիտասարդական միութեան Կեդրոնական վարչութեան եւ մասնակցութեամբ Գանատայի տարածքին գտնուող բոլոր մասնաճիւղերէն ժամանած աւելի քան 120 ԳԵՄ-ականներու, Մայիս 19-22 շաբաթավերջին տեղի ունեցաւ ԳԵՄ-ի համագանատական տարեկան սեմինարը, Գրիսթի Լէյք բանակավայրէն ներս:

Այս տարուան սեմինարի հիմնական թեմաներն էին Հայաստանի առաջին անկախութիւնը կերտող ճակատագրական օրերը, ինչպէս նաեւ Ամերիկայի եւ Գանատայի Հայ դատի գրասենեակներուն տարած աշխատանքները:

Առաջին օրուան ընթացքին երիտասարդները առիթը ունեցան ներկայ ըլլալու 4 դասախօսութիւններու: Առաջին դասախօսութիւնը ներկայացուց ընկ. Ներսէճ Լիպարեան, որ հետաքրքրական պատկերներով ներկայացուց Հայաստանի Ա. Հանրապետութիւնը կերտող յայտնի դէմքերն ու դէպքերը: Ապա ընկ. Միսաք Պէլեան զրուցեց հայրենադարձութեան մասին, իր անձնական փորձառութիւնը օրինակ բերելով: Երրորդ դասախօսն էր ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ ընկ. Ռաֆֆի Տօնապետեան, որ դասախօսեց Հայաստանի մէջ տեղի ունեցած վերջին դէպքերուն եւ այդ առումով՝ Դաշնակցութեան կեցուածքին մասին: Ամերիկայի Հայ դատի գրասենեակէն ընկճ. Թերեզա Երիմեան ամփոփ ձեռով ծանօթացուց եւ աշխատանոց մը վարեց Հայ դատի ընդհանուր աշխատանքներուն ու այդ ուղղութեամբ տարուող գործունէութեան մասին Ամերիկայի Միացեալ Նահանգներէն ներս, իրեն միացաւ նաեւ Գանատայի Հայ դատի գրասենեակէն ընկ. Սեւակ Պէլեան:

Սարգսրապատի Մէջ. «Հայ Ժողովուրդը Յաղթեց, Որովհետեւ Ունէր Արամ Մանուկեանի Պէս Նուիրեալ Առաջնորդ» Ընդգծեց Վարչապետ Փաշինեան

28 մայիսին Սարգսրապատի հերոսամարտի յուշահամալիրին մէջ տեղի ունեցաւ Հայաստանի Հանրապետութեան եւ Մայիսեան հերոսամարտերու 100-ամեակին նուիրուած՝ «Յաղթանակի դարը» խորագիրը կրող տօնակատարութիւնը, որուն իրենց մասնակցութիւնը բերին Հայաստանի նախագահ Արմէն Սարգսեան, Արցախի Հանրապետութեան նախագահ Բակօ Սահակեան, վարչապետ Նիկոլ Փաշինեան, Ամենայն Հայոց Գաւթիւն Բ. կաթողիկոս, ինչպէս նաեւ պաշտօնական հիւրեր:

Վարչապետ Փաշինեան ծաղկեպսակ զետեղեց Սարգսրապատի ճակատամարտի հերոսներու յիշատակը յաւերժացնող յուշակոթողին առջեւ եւ յարգանքի տուրք մատուցեց: Այնուհետեւ տեղի ունեցաւ զինուորական շքերթ՝ նուիրուած Մայիսեան հերոսամարտերու 100-ամեակին:

Այս առիթով իր արտասանած խօս-

քին մէջ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան անդրադարձաւ 100 տարի առաջ՝ 1918 թուականի մայիսի 28-ին հայ ժողովուրդի պատմութեան մէջ արձանագրուած իւրայատուկ իրադարձութեան՝ Հայաստանի Ա. Հանրապետութեան հիմնադրութեան, որ կարելի եղաւ հայ ժողովուրդին քրտինքով ու արեամբ:

«Հայ ժողովուրդը Բաշ Ապարանի եւ Սարգսրապատի մէջ տարաւ իր պատմութեան փառահեղ յաղթանակները՝ ջախջախելով թրքական զօրամիաւորումներ, եւ այդ յաղթանակի թագն ու պսակը դարձաւ Ա. Հանրապետութեան հռչակումը: Հերոսական այս ճակատամարտերուն պատմութիւնը աներեւակայելի է: Ինչպէ՞ս կրցաւ Յեղասպանութեան ենթարկուած, սուրի քաշուած, թաւանուած ու ոչնչացման եզրին կանգնած հայ ժողովուրդը յաղթել թրքական բանակին: Արդեօք կայի՞ն ընկերային-տնտեսական, ռազմաքաղաքական նա-

խաղրեալներ: Ո՛չ եւ երիցս ոչ: Գործնապաշտութեան եւ պարզ հաշիւով հայ ժողովուրդը յաղթելու ոչ մէկ առիթ եւ կարելիութիւն ունէր, բայց մենք յաղթեցինք, որովհետեւ սթափեցնող արթնութեամբ մը հասկցանք, որ մեր էութիւնը անապատներ քշուիլն ու կոտորուիլը չէ, որ մեր երակներուն մէջ կը հոսի Մեսրոպ Մաշտոցի, Արտաշէս արքայի արիւնը, մեր երակներուն մէջ կը հոսի Վարդան Մամիկոնեանի արիւնը:

«Հայ ժողովուրդը յաղթեց, որովհետեւ իր պատմութեան վերջին չորս հարիւր տարիներուն ընթացքին առաջին անգամ յոյսը դրաւ ո՛չ թէ ուրիշներուն, այլ ինքնիւր վրայ: Հայ ժողովուրդը յաղթեց, որովհետեւ հասկցաւ, որ ազգային պետութիւնն է ինքնութեան ու արժանապատուութեան միակ երաշխիքը, որ մեզի՝ քաղաքացիներուս պատկանող պետութիւնն է միայն, որ կրնայ ապահովել մեր իրաւունքը, մեր անվտանգութիւնն

ու ապագան: Մենք հասկցանք, որ ազգային որեւէ երազանք կարելի չէ ի կատար ածել առանց պետութիւն ունենալու, ինքնիշխանութիւն ունենալու, անկախութիւն ունենալու: Եւ անկախ պետութիւնը իւրաքանչիւր ազգային երազանք ի կատար ածելու առաջին անհրաժեշտ նախապայմանն է: Հայ ժողովուրդը յաղթեց, որովհետեւ ունէր Արամ Մանուկեանի պէս նուիրեալ առաջնորդ, որ պատրաստ էր ոչ թէ զոհել եւ վայելել իշխանութեան բարիքները, այլ կրել զրկանքներ եւ զոհուիլ յանուն ժողովուրդին, որ պատրաստ էր յանուն իր ժողովուրդին կռուիլ մինչեւ իր կեանքի վերջին վայրկեանները: Հայ ժողովուրդը յաղթեց, որովհետեւ ունէր այնպիսի հրամանատարներ, ինչպէս Թովմաս Նազարեկեանը, Դրոն, Մովսէս Սիլիկեանը, Դանիէլ Բէկ Փիրումեանը: Հայ ժողովուրդը յաղթեց, որովհետեւ որոշեց յաղթել», ըսաւ Փաշինեան:

Մալխեան փառայեղ յաղթանակին նուիրուած տողանցք Մոնթրէալի մէջ



(Լուսանկարը՝ Մաք Թաշճեանի)

Կազմակերպութեամբ ՀՄԸՄ-Կամբ մասնաճիւղի վարչութեան եւ մասնակցութեամբ Մոնթրէալի մէջ գործող սկաուտական, մարզական, բարեգործական թէ՛ մշակութային միութիւններու, Կիրակի, 27 Մայիս 2018-ին տեղի ունեցաւ Հայաստանի առաջին Հանրապետութեան հիմնադրման 100-ամեակին եւ Մոնթրէալի ՀՄԸՄ-Կամբ մասնաճիւղի հիմնադրութեան 60-ամեակին նուիրուած փառաշուք տողանցքը, որ սկիզբ առաւ ժամը 12:15-ին Hanri Bourassa պողոտայէն: Շքերթը առաջնորդեց ՀՄԸՄ-Կամբ մասնաճիւղի փողերախումբը, որուն նուագակցութեամբ սկաուտներն ու մարզիկները հպարտօրէն քալեցին: Անոնք անցնելով L'Acadie-ն ու հատելով Dudemaine փողոցը՝ հասան Ս. Յակոբ Ազգ. վարժարանի բակը:

Այս փառահեղ տողանցքին իրենց մասնակցութիւնը բերին Գանատայի Թեմի Բարեջան առաջնորդ Գերաշնորհ Տ. Բաբգէն Արք. Չարեան, Գերաշնորհ Տ. Սուրէն Արք. Գաթարոյեան, հոգեւոր հո-

վիւ Մոնթրէալի Ս. Յակոբ Մայր եկեղեցւոյ՝ Արք. Տ. Գառնիկ Ա. Քէն. Գոյունեան, ՀՄԸՄ-ի Կեդր. վարչութեան ներկայացուցիչ եղբ. Մոսիկ Թօփուզեան, ՀՄԸՄ Գանատայի Շրջ. վարչութիւնը, ՀՄԸՄ Գանատայի Շրջ. Սկաուտ խորհուրդը, ՀՄԸՄ-Կամբի եւ ՀՄԸՄ Լաւալի վարչական կազմերը, երէց խմբապետ քոյր-եղբայրներ, Սկաուտական եւ Մարզական Խորհուրդներու անդամները, սկաուտական (Լաւալի կազմը՝ առաջին անգամ ըլլալով) եւ մարզական խումբերը, Hellenic Pavlides սկաուտական խումբը, ՀՅԴ Գանատայի Պատանեկան Միութեան անդամները, ՀՕՄ-ի «Սօսէ» եւ «Շուշի» մասնաճիւղերու Վարչութեան անդամներն ու Համագլխայինի «Սանահին» մասնաճիւղի Վարչութեան ներկայացուցիչը: Օտար հիւրերու կարգին էին Emmanuelle Lambrapoulos, Emmille Thuillier եւ Effie Giomou:

Հակառակ անոր որ եղանակային լաւ պայմաններ չկային, բայց եւ այնպէս ամբողջ ճամբուն երկայնքին քալելով ժողովուրդի հոծ բազմութիւն

կար, որուն ոգեւորութիւնն ու յուզմունքը ակնյայտ էր:

Շքերթը կանգ առաւ Ս. Յակոբ վարժարանին բակը, ուր տեղի ունեցաւ դրօշակի արարողութիւն:

ՀՄԸՄ-Կամբ մասնաճիւղի սկաուտներուն կողմէ պատրաստուած կայմին վրայ գետեղուած էին ՀՄԸՄ 100-ամեակի, Գանատայի եւ Քեպէգի դրօշակները, ապա անոնց միացաւ Հայաստանի Հանրապետութեան եւ Արցախի օրհնուած դրօշակները՝ ձեռամբ թեմիս բարեջան առաջնորդ Գերշ. Տ. Բաբգէն Արքեպիսկոպոս Չարեանի:

Դրօշակի արարողութենէն ետք խօսք առաւ ՀՄԸՄ-Կամբ մասնաճիւղի Վարչութեան ատենապետ եղբ. Մանուէլ Քէօսէեան, որ յետագարձ ակնարկ մը նետելով հայ ժողովուրդին կատարած սխրանքին՝ պարտք համարեց, որ նոր սերունդը շարունակէ իր նախնեաց ընթացքը եւ բարձր պահէ հայ ժողովուրդին անունը իր տիպար կեցուածքով: Ան իր խօսքին մէջ ըսաւ, թէ Մայիս 28-ն ու Նոյեմբեր 1-ը երկուորեակ են, որովհե-

տեւ ծնունդ առած են նոյն թուականին՝ 1918-ին ու առ այսօր միասնաբար կը շարունակեն իրենց երթը:

Ապա հրաւիրեց Սրբազան Հայրը, որպէսզի փոխանցէ իր հայրական օրհնութիւնը: Ան անդրադարձաւ 1918-ի հերոսական ճակատամարտերուն եւ կարեւորեց զանոնք, որովհետեւ առանց այդ հերոսամարտերուն՝ հայ ժողովուրդը պիտի չունենար այսօրուան Հայաստանը:

Առաջնորդ Սրբազան Հայրը «Պահպանիչ»ով փակեց իր խօսքը, որմէ ետք սկսաւ ճաշի սպասարկութիւնը՝ պատրաստուած ՀՄԸՄ-Կամբ մասնաճիւղի Սկաուտական խորհուրդին կողմէ: Այդ ընթացքին ելոյթ ունեցաւ էլի Պէրպէրեան, որ խանդավառեց ներկաները հայրենասիրական երգերով: Երգերով եւ խմբային արտասանութեամբ ելոյթ ունեցան նաեւ Պատանեկան Միութեան անդամները: Խանդավառ ու ընկերային մթնոլորտը շարունակուեցաւ մինչեւ իրիկուն:

Քոյր Շողիկ Ազարիկեան

Հայաստանի Առաջին Հանրապետութեան 100-ամեակը նշուեցաւ Վանգուվըրի մէջ

Շաբաթ, 12 Մայիս 2018-ին, Արեւմտեան Գանատայի Վանգուվըրի հայ դպրութիւնը, կազմակերպութեամբ ՀՅԴ ԳԵՄ-ի «Արշալիր Շիրակեան» մասնաճիւղի եւ հովանաւորութեամբ ՀՅԴ «Սիմոն Վրացեան» կոմիտէի Վանգուվըրի, հանդիսաւորապէս նշեց Հայաստանի Առաջին Հանրապետութեան 100-ամեակը, Հայ կեդրոնի «Լազարեան» սրահէն ներս:

Սրահը լեցուած էր Վանգուվըրի հայ համայնքի զաւակներով եւ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան սուրբ գաղափարին ծառայող եւ հաւատացող հայորդիներով: Մթնոլորտը իւրայատուկ ջերմութեամբ ողողուած էր:

Զեւնարկին ներկայ էին Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցոյ հոգեւոր հովիւ Հոգեշնորհ Հայր Գարեգին Վարդապետ Շիրաթեանը, Գանատայի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ ընկեր Վահէ Անտոնեան, հիւրեր, համակիրներ եւ 150-է աւելի հրաւիրեալներ:

Հանդիսութեան պաշտօնական բացումը սկսաւ Հայաստանի Հանրապետութեան եւ Գանատայի քաղաքներով: Մէկ վայրկեան լուծեամբ ներկաները յարգեցին հայրենիքի ազատագրութեան, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան եւ հայ ժողովուրդի ծառայութեան ճամբուն զոհուածներու անթառամ յիշատակը:

Օրուան հանդիսավարութիւնը ձեռնհասօրէն կատարեցին ընկերուհի Սարին Ղուկասեանն ու ընկեր Սեփ Դալին: ՀՅԴ Վանգուվըրի «Արշալիր Շիրակեան» մասնաճիւղի երիտասարդացի անունով բացման խօսք կատարեցին ընկերուհի Մարի Ստեփանեան (անգլերէնով) եւ ընկեր Յարութ Աբիկեան (հայերէնով): Ընկ. Յարութ Աբիկեան իր խօսքը աւարտեց ըսելով. «Եւ մենք՝ ՀՅԴ Գանատայի երիտասարդական



Միութեան Վանգուվըրի «Արշալիր Շիրակեան» մասնաճիւղի ընկեր ընկերուհիներս, կ'ուխտենք մեր ազգանուէր գործունէութեամբ շարունակել աջակցիլ մեր ժողովուրդին եւ սատարել ազատ, անկախ եւ արդար հայրենիքի կերտման»:

Օրուան պատգամը Փոխանցեց Գանատայի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ ընկեր Վահէ Անտոնեանը: Ան իր խօսքին մէջ ըսաւ. «ՀՅԴ-ն իր ծնած օրէն ծառայելու առաքելութիւնը ունի, ծառայութիւն՝ իր ժողովուրդի բարօրութեան համար, ծառայութիւն՝ իր ժողովուրդի դատին համար եւ առհասարակ այդ առաքելութեան մէջ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը արձանագրած է նուաճումներ»:

Յայտագրի պաշտօնական բաժնին եւ ընթերցելի յաջորդեց խրախմանքը: Երեկոն ճոխացուց Լոս Անճըլըսէն ժամանած ազգային եւ յեղափոխական երգերու մեկնաբան Դրօ Գրիգորեանը: Տեղի ունեցաւ նաեւ 100-ամեակի կարկանդակի հատում:

Մեղրիկ Սիւլահեան Չափանեան

Գանատայի Լաւալ քաղաքին մէջ ծածանեցաւ եռագոյնը

Հայաստանի Առաջին Հանրապետութեան 100-ամեակին առիթով, ՀՅԴ Լաւալի (Գանատա) «Սարգիս Զեյթրեան» Կոմիտէի նախաձեռնութեամբ եւ Լաւալի Հայ Դատի յանձնախումբի կազմակերպութեամբ, առաջին անգամ ըլլալով Լաւալի քաղաքապետարանին առջեւ վեր սլացաւ Հայաստանի Հանրապետութեան եռագոյնը եւ հնչեց Հայաստանի ազգային օրհներգը:

Արարողութեան ներկայ էին Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Բաբգէն Արք. Չարեանը, Հայաստանի Արտակարգ եւ լիազօր դեսպան՝ պարոն Լեւոն Մարտիրոսեանը, նահանգային եւ դաշնակցային պաշտօնատարներ, Լաւալի քաղաքապետ պրն. Տեմէրը, նախարարներ եւ հայ համայնքի ներկայացուցիչներ:

ՀՕՄ-ի Լաւալի «Շուշի» մասնաճիւղի 25-ամեակի տօնակատարութիւն



ՀՕՄ-ի Լաւալի «Շուշի» մասնաճիւղի 25-ամեակի տօնակատարութիւնը տեղի ունեցաւ 29 Ապրիլ 2018-ին, կէսօրէ ետք ժամը 5-ին, Մոնթրէալի Հայ կեդրոնի «Աւետիս Ահարոնեան» սրահէն ներս, հովանաւորութեամբ Տէր Բաբգէն Արքեպիսկոպոս Չարեանի՝ Առաջնորդ Գանատայի Հայոց Թեմին, եւ նախագահութեամբ ընկ՝ Սեդա Գուշեանի: Ներկայ էին ՀՕՄ-ի Շրջանային վարչութեան ատենապետ ընկ՝ Անի Օհանեան, ՀՅԴ Բիւրոյի անդամ ընկ. Յակոբ Տէր ինչաւորեան, ՀՅԴ Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ ընկ. Վաչէ Շամբեան, Ազգային վարչութեան ատենապետ տիկ. Մովսէս Թէրզեան, օրուան պատգամաբեր ընկ՝ Աննա Պուլկարեան, հոգեւոր հայրեր, պատկան մարմիններու եւ քոյր միութիւններու ներկայացուցիչներ, ՀՕՄ-ականներ եւ բարեկամներ:

Օրուան հանդիսավար ընկ՝ Թալին Ապրաքեան մասնաճիւղիս վարչութեան անունով բարի գալուստի խօսք փոխանցեց ներկաներուն եւ շնորհաւորեց 25-ամեայ երթ թեւակոխող մասնաճիւղը, որ արցախեան պատերազմի յաղթանակի ոգիէն ներշնչուելով անուանակոչուեցաւ «Շուշի», աւելի եւս ամրապնդելու սփիւռք-հայրենիք կապը:

Ան հրաւիրեց ՀՕՄ-ի Լաւալի «Շուշի» մասնաճիւղի ատենապետուհի ընկ՝ Ազգանոյշ Հատիտեանը, որ բեմ բարձրանալէ ետք հրաւիրեց ներկաները մէկ վայրկեան յոտնկայս յարգելու յիշատակը ՀՕՄ-էն յաւատարմութեամբ «Շուշի» մասնաճիւղի 2017-2018 տարեշրջանի նիւթաբարոյական գործունէութիւնը եւ նշեց, որ այդ աշխատանքները կարելի չէր իրագործել՝ առանց անդամներուն անխոնջ աշխատանքին եւ անսակարկ նուիրումին: Ընկերուհիին հրաւիրեց Ս. Յակոբ եկեղեցւոյ Հոգաբարձութեան ներկայացուցիչ ընկ՝ Շաքէ Յակոբեանը, որուն փոխանցեց ՀՕՄ-ի «Շուշի» մասնաճիւղին կողմէ Սուրբ Յակոբ դպրոցին

\$12.000 յատկացումի վճարագիրը:

Հանդիսավար ընկերուհիին հրաւիրով բեմ բարձրացաւ ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային վարչութեան ատենապետ ընկ՝ Անի Օհանեան, որ խրախուսեց անդամները ըսելով. «Դուք բոլորդ սիւներն էք մեր ազգին, ազգային կառույցին եւ մանաւանդ «Շուշի» մասնաճիւղին, որքան ալ պարզ թուի ճանապարհը, դիւրին չէ ՀՕՄ-ականին գործը, սակայն քաջ գիտցէ՛ք, թէ ձեր նուիրումն ու ծառայութիւնը միշտ ալ կը յանգին սրտի անհուն գոհունակութեան», ապա խօսքը աւարտեց բարի երթ մղութելով մասնաճիւղիս՝ դէպի նոր տասնամեակներ: Ընկերուհիին նաեւ կարգաւ ՀՕՄ-ի Կեդրոնական վարչութեան շնորհաւորագիրը՝ մասնաճիւղիս 25-ամեակին առթիւ:

Ձեռնարկի նախագահ ընկ՝ Սեդա Գուշեան փոխանցեց իր սրտի խօսքը եւ շնորհաւորանքը, մղութելով նորանոր յաջողութիւններ:

Օրուան անակնկալն էր Լաւալի ՀՅԴ «Սարգիս Զէյթլեան» կոմիտէին կողմէ տրուած գնահատագիրը ՀՕՄ-ի «Շուշի» մասնաճիւղի 25-ամեայ ծառայութեան առթիւ, գոր փոխանցեց կոմիտէի անդամ ընկ՝ Մարի Յովհաննէսեան:

Գեղարուեստական յայտագրով բեմ հրաւիրուեցան Հայր Վարդան Վրդ. Թաշճեան, Նսայի Մանուկեան, Վարդուհան Մարգարեան եւ Յարութ Կիւրոյեան, որոնք երգեցին «Մաղթանք Հայրապետական», «Սուրբ, Սուրբ» եւ «Բլբուլն Աւարայրի»:

Ապա Սոնա Թիթիգեան Կէտիկեան ասմունքեց ՀՕՄ-ուհիներուն նուիրուած ժառանգ Յակոբեանի «Այս քոյրերը» քերթուածը:

Անկէ ետք հանդիսավար ընկերուհիին ներկայացնելով օրուան պատգամաբեր ընկ՝ Աննա Պուլկարեանի կենսագրականը, բեմ հրաւիրեց զայն: Ընկ՝ Պուլկարեան շնորհաւորելով մասնաճիւղի

զի հիմնադրութեան 25-ամեակը ըսաւ. «Այսօր կարելի է համարել վերանորոգուիտի օր, որովհետեւ միայն վերանորոգումով է, որ կարելի է զօրացնել մեր կազմակերպութիւնը», նաեւ նշեց, թէ այսօր, 108 տարիներ ետք, ՀՕՄ-ը անժամանցելիօրէն նոր մարտահրաւէրներու առջեւ կը գտնուի, այժմեականացման պայքարին կ'ուզէ ներդնել իր ուժերը՝ երիտասարդացնելով իր շարքերը եւ իր անցեալի փորձին միախառնելով մերօրեայ աշխատելաձեւը այսօրուան եւ վաղուան կարիքներուն: Ան նաեւ աւելցուց. «Մեր նորագոյն պատմութեան պայքարէն անցած, վերապրած եւ այսօր համաշխարհային վարկ ու յարգանքի արժանացած հայ կիներու այս անգուղական կազմակերպութիւնը, սփիւռքէն հայրենիք, միշտ հայ ժողովուրդին եւ անոր արդար դատին կողքին կանգնած, անկասկած պիտի շարունակէ պահել մարդասիրական գործունէութեան անհեղձ անապարհը դէպի ճշմարտութեան եւ արդարութեան համամարդկային յաղթանակը»: Ընկերուհիին իր խօսքը աւարտեց «Ժողովուրդիս հետ եւ ժողովուրդիս համար» կարգախօսով: Ապա տեղի ունեցաւ ճաշի սպասարկութիւն:

Հանդիսութեան երկրորդ բաժինը սկսաւ 14 անդամներու երգման արարողութեամբ, կնքամայրութեամբ ընկ՝ Անի Օհանեանի: Ընկերուհիին խրատեց երգուեալները, որ գործեն իրենց կատարած ուխտին հետեւելով եւ յաղթանակներ բոլոր դժուարութիւնները՝ հասնելու ՀՕՄ-ի նպատակին:

Ներկաները հաճոյքով դիտեցին «Շուշի» մասնաճիւղի 25-ամեակին առթիւ պատրաստուած տեսերիզը, որ կը ցուցնէր մասնաճիւղիս 25 տարուան գործունէութիւնը:

Համագգային «Սանահին» մասնաճիւղի «Անի» պարախումբէն Աննա Համալեան իր մասնակցութիւնը բերաւ պարով մը, ապա տեղի ունեցաւ զարգասեղներու տուչութիւն:

15-ամեայ անդամակցութեան զարգասեղներ ստացան ընկերուհիներ Վարդուհի Արամալեան, Մատլէն Հանէշեան, Արմինէ Մուքոյեան, ձեռամբ՝ ընկ՝ Ազգանոյշ Հատիտեան: 25-ամեայ զարգասեղներ ստացան ընկերուհիներ Արփի Աճէմեան, Ռիթա Էքմէքեան, Լուսին Վարդիվառեան, Սոնա Գարայեան, Էլիզ Մաթեան, Էլօ Շիրինեան, Ժիւլիէթ Յունանեան, Վերոնիք Մնակեան, Զեփիւռ Պետրոսեան: Զարգասեղներ փոխանցեցին Շրջանային վարչութեան անդամ ընկերուհիներ Անի Գրալեան, Ժօթօ Պետրոսեան եւ Վարդուհի Պեղեան:

Ընկ՝ Ալիս Եանպէսեան 35-ամեայ զարգասեղ ստացաւ, ձեռամբ՝ Շրջանային վարչութեան անդամ ընկ՝ Մարալ Յովսէփեանի:

Ընկ՝ Մարալ Յովսէփեան ներկայացուց ընկերուհիներուն՝ Սիրարփի Մանտալեանի եւ Այտա Ժամկոչեանի, կենսագրականները, որոնք ստացան իրենց 50 տարիներու ծառայութեան զարգասեղներն ու Կեդրոնական վարչութեան գնահատագրերը, ձեռամբ ընկ՝ Անի Օհանեանի:

60-ամեայ գնահատագրի արժանացաւ ընկերուհի Էլիզ Պոյաճեան:


Մասնաճիւղի յաջորդական վարչութիւններուն 11 ատենապետները կատարեցին մոմավառութիւնն ու կարկանդակի հատումը, իսկ մասնաճիւղի երիցագոյն ատենապետուհի ընկ՝ Նուրիցա Մաթոսեան ջահը փոխանցեց կրտսեր անդամին՝ Դալար Մալոյեանին:

Գերաշնորհ Տէր Բաբգէն Արք. Չարեան, Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդարանին կողմէ, մասնաճիւղիս փոխանցեց «Գիր օրհնութեան»:

Սրբազան Հօր սրտի խօսքով եւ «Պահպանիչ»ով վերջ գտաւ հանդիսութիւնը:

Ընկ՝ Ալիս Հատիտեան (Լուսանկարները՝ Արմէն Ալեմեանի)

Տաճկահայ Գաղթաշարժը Եւ Անոնց Դերը Հայաստանի
Հանրապետության Կազմության Մէջ - ԺԸ.



Գլուխ Հինգերորդ
1917. Ռուսական Յեղափոխությունը և
Տանկահայաստանը
1.

Տաճկահայաստանի մէջ Ռուսաստանը կ'ամրա-
նար: Ռուսական զօրքերը ամուր չղթայ մը կազմած էին
Պարսկաստանի սահմանէն մինչեւ Նրզիկա-Տրապիզոն:
Կ'ամրացնէին իրենց խրամատները. ձմեռուայ պաշարը
եւ ռազմամթերքը կը կուտակէին առաջաւոր դիրքե-
րուն մօտիկ. իսկ թիկունքը կը սկսուէր տենդային աշ-
խատանք մը ռազմական ճանապարհներ շինելու: Այս-
պիսով, ռուսական բանակը կը ձեռնարկէր նեղ երկա-
թուղագծերու շինութեան, մէկը Բաթումէն Տրապիզոն
իսկ միւրը՝ Սարրիսամիշէն Քէօփրիքէօյ-էրզրում —
Մամաթիսթուն: Լայն երկաթուղագիծ մը կը կառու-
ուէր Շահթաթիէն (Արարատեան դաշտ) դէպի Բայա-
զիտ եւ Ալաշկերտի Ղարաքիլիսէ: Այդ երկաթուղու մէկ
ծիւղը Բայազիտի դաշտէն կ'երկարէր Սալայի եւ Բերկ-
րի: Երկաթուղու կառուցման հետ զուգահեռաբար կը
շինուէին մեծ խճուղիներ՝ բազմաթիւ ուղղութիւննե-
րով: Այդ խճուղիները երկարեցան մինչեւ Վան, Մա-
լազկերտ, Ախլաթ: Իսկ Բասէնէն խճուղի մը անցաւ
Արագի հովիտով մինչեւ Խնուս, անկէ ալ Չարպուհար:
Ալաշկերտի խճուղին անցաւ Սփրատի հովիտէն Դու-
թախ, եւ նոյն հովիտով, Մալազկերտի եւ Խնուսի շրջա-
նի մէջտեղէն, հասաւ մինչեւ Չարպուհար (Մշոյ դաշտ):
Հայաստանը, կարելի է ըսել, կը ծածկուէր կանոնաւոր
ճանապարհներով: Ալաշկերտի եւ Բերկրիի երկաթուղա-
գիծը պիտի երկարէր մինչեւ Վան, Ախլաթ, Մալազկերտ
եւ այդպէս, շարունակաբար պիտի հետուէր բանակի
յառաջխաղաղման:

Այս աշխատանքները սկսած էին 1916-ի դարունէն եւ շարունակուեցան մինչեւ 1917-ի վերջը: Ռուսական զինուորական իշխանութիւնը տասնեակ միլիոններ յատկացուց այդ աշխատանքներուն, որոնց չորհրհիւ աշխատող ձեռքերը պարապ չմնացին, (քանուորութեան մեծամասնութիւնը տաճկահայերն էին), իսկ վատնուած զինուորական փողերը մնալուն հարստութիւն մը դարձան: Տաճկահայաստանի համար, ճանապարհներու կառուցումով: Այս հաշուով, կառուցուած ենք երկաթուղագիծերը 250 քրիոմէթր, լայն երկաթուղագիծերը 150 քրիոմէթր կը հաշուէին. իսկ բոլոր խնդիրներու համադրումար երկարութիւնը 2000 քրիոմէթրի կը հասնէր: Տասնեակ մը տարուայ աշխատանք եւ զոհողութիւն պիտի պահանջէր այդ ցանցի ուսումնասիրութիւնը, ծրագրումը եւ մանաւանդ գործադրութիւնը: Վաղուայ համար իսկ՝ այդ հարստութիւնը անկորնչելի է, որքան ալ աւերուած ու քանդուած վիճակով ան դառնայ մեզի:

Տաճկահայ ժողովուրդը կը տեսնար վեր յիշուած գլինոտորական եւ տնտեսական աշխատանքները, ու աւելի քան կ'ապահովուէր նոր նահանջներու մղձաւանջէն: Այդ ապահովութիւնը կը քաջալերէր հայութիւնը որ ձեռնարկէր վերաշինական եւ գլղատնտեսական աշխատանքներու: 1916-ի աշունը դարձաւ մեղի համար տեղաւորման եւ ցանքսի շրջան մը, որ 1917-ի տարեշրջանին աւելի բարգաւաճ վիճակի մը հասանքի կ'աւելնէր հայութիւնը հետզհետէ ինքնաբաւ կը դառնար:

Ռուսական կոլկասեան բանակի կարեւոր ուժերը կուտակուած էին Խնուսի էրզրումի, Երզնկայի եւ Պարսկաստանի ճակատներու վրայ, ու մեծ պատրաստութիւն կը տեսնէին 1917-ի գարնան յարձակողականի մը համար: Այդ յարձակողականի նպատակն էր Երզնկայէն առաջանալ Խարբերդ-Սեբաստիա: Խնուսէն իջնել Տիգրանակերտ, իսկ Պարսկաստանի եւ Վանի գծէն մտնել Մուսուլ եւ այդ կողմէն միանալ անգլիական բանակին:

Կ'ենթադրուէ՛ք գործողութիւնները սկսիլ մարտի առաջին շաբաթէն: Բայց ռուսական մեծ յեղափոխութիւնը պայ-թեցաւ 1917-ի փետրուար 28-ին, եւ մէկ երկու օրուայ ընթացքին տարածուեցաւ ամբողջ ճակատներու վրայ, առանց դիմադրութեան հանդիպելու:

Յեղափոխութիւնը եկաւ կասեցուց վերի ծրագիրը: Զօրքերը մնացին իրենց գրաւած վայրերու մէջ, ու զբաղեցան յեղափոխութիւնը խորացնելով ... Ամբողջ Ռուսաստանի համար նոր կեանք մը կը սկսուէր: Այդ նոր կեանքի ալիքներն իրենց հետ կը տանէին Կովկասը, ու ճակատագրական ազդեցութիւն մը կ'ունենային նաեւ Տաճկահայաստանի վրայ:

Ռուսական յեղափոխութիւնը կատարուած իրողութիւն մըն էր, որուն կը դիմաւորէինք եւ Հրճուանքով, եւ վախով: Հրճուանքով, անոր համար, որ ցարական իշխանութեան տապալումով, մենք եւս չունէինք առնչութիւնք, մեզի ալ կը բացուէր քաղաքական ազատութեան լայն հորիզոններ եւ յեղափոխական գործունէութեան լայն ասպարէզ: Իսկ վախով, անոր համար, որ կը կասկածէինք ճակատի քայքայումէն եւ գիտէինք որ ատկէ պիտի օգտուէր թուրքը, որու երեւումով՝ մեր բոլոր յոյսերն ու ծրագրերն օդը կը ցնդէին:

Տաճկահայ ժողովուրդը կրկնապատկուած եռանդով փարեցաւ գործին եւ երկրի մէջ իր բոլոր ջանքերը լարեց յարմարուելու յեղափոխական մթնոլորտին եւ օգտուելու ազատութեան ընձեռած բարիքներէն:

2.

Մինչև եռսական մեծ յեղափոխութիւնը եռսակ-
նայ հատուածը զբաղուած էր գաղթականական եւ
կուլտուրա-կրթական գործերով: Անոր աշխատանքները
կովկասեան Հայաստանի վերաբերմամբ քաղաքական
բովանդակութիւն չունէին: Կովկասահայ հատուածի
քաղաքական գործունէութիւնը կը սահմանափակուէր
կամաւորական շարժումով եւ իր քաղաքական մտահո-
գութիւնները, առանձնապէս, կեդրոնացած էին Տաճ-
կահայաստանի վրայ: Կամաւորական գունդերու լիք-
ուիտացիայէն յետոյ, եռսակայ մտաւորականութիւնն
աւելի քան կ'ամփոփուէր Կովկասի մէջ, ու կը բաւակա-
նանար իր ուժերն սպառել վեր յիշուած ոչ-քաղաքա-
կան աշխատանքներու մէջ: Տաճկահայաստանի մէջ
ամփոփուած ժողովուրդը եւ անոր զինակաւորները (եռ-
սակայ յայտնի եւ անյայտ բազմաթիւ գործիչներ իրենց
մնայուն մասնակցութիւնը կը բերէին երկրի աշխա-
տանքին) իրենց սովորական աշխատանքներէն զատ,
քաղաքական ձգտում մը եւ անոր համապատասխան
անհրաժեշտ գործելակերպ մ'ունէին:

Սակայն ռուսական յեղափոխութեան հռչակումով, դրութիւնն ամբողջովին փոխուեցաւ: Հայութիւնը բաժնուեցաւ երկու խոշոր ճակատներու: Կովկասի հայութիւնը, յեղափոխութեան շնորհիւ, քաղաքական ազատութեան թեւեր առաւ եւ տնեղազին կերպով նետուեցաւ յեղափոխութեան յորձանուտին մէջ: Տաճկահայաստանի կազմաւորումը մոռացուեցաւ, կա'մ, կապուեցաւ ռուսական յեղափոխութեան ճակատագրին: Փաստն այն է որ քաղաքական գործունէութեան գետինը փոխադրուեցաւ Կովկասի մէջ:

Ռուսահայ Հատուածին առջև, այսպիսով, բաց-
ուեցած նոր ու լայն հորիզոն մը, թէ՛ զգայնորէն կազ-
մաւորուելու եւ թէ՛ համառուսական մասշտաբով տեղ
գրաւելու: Ռուսահայութիւնը համառուսական եւ կող-
կասեան յեղափոխական ընդհանուր մտայնութեան
աւելի ընտելացած էր, քան ազգային անջատ ամբող-
ջութիւն մը կազմելու ծրագրին: Այլ խօսքով, ազգային
հաւաքականութեան գաղափարն ու ընդհանուր հասա-
րակական յեղափոխութիւնը զուգահեռ տանելու ձեւա-

կերպրուած մտածողմը տիրական չէր: Ռուսահայութիւնը ռուսական Հայաստանի մէջ պետութիւնն եւ քաղաքական զգգ դառնալու ճանապարհը շատ ուշ բռնեց: Անիկա, սկզբնական շրջանին, տարուեցաւ համապետական երջանկութեան գաղափարով, սպասելով, որ, աստիճանական զարգացումով, յանգի Ֆէտէրաացիային, որ շատ ուշացաւ:

Կովկասի հայութիւնը լարուած պայքարի եւ
ցնծութեան մէջ էր: Համագումարներ, կուսակցական
ժողովներ, բնտրական պայքար, ճառեր եւն. եւն. մէկը
միւսին կը յաջորդէին: Գաղթականական գործերը երկ-
րորդ դիմի վրայ կ'անցնէին մտաւորականութիւնը կը
լծուէր քաղաքական աւելի փայլուն աշխատանքներու:

Իսկ երկրորդ ճակատի վրայ կ'իյնար Տաճկահայությունը, որ իր կեանքի պայմաններով, ձգտումներով ու ապրումներով բոլորովին տարբեր հոգեբանություն մ'ունէր: Սակայն պարտ կը զգամ հոս յայտնելու որ Տաճկահայութիւնն ալ բաժնուած էր տարբեր զանգուածներու, որոնք իրենց գտնուած միջավայրի բերումով, քաղաքական կերպարանքով կամ հոգեբանութեամբ, իրարմէ կը տարբերուէին:

Տաճկահայ այն հատուածը, որ տեղաւորուած էր հայկական նահանգներու մէջ, գերազանցապէս քաղաքական միութեան մը կը ձգտէր. ապրուստի հետ մէկ-տեղ հայրենիքի պաշտպանութեան մտահոգութիւնն ունէր: Անկիւա շարունակութիւնն էր այն սերունդին, որ երկար ժամանակ յեղափոխական կռիւ մղած էր յանուն Տաճկահայաստանի ազատագրութեան: Այդ հատուածն ալ, թէեւ ընդհանուր միջոցաւոր տակ, կը քալէր ուսական յեղափոխութեան ճանապարհով, բայց քաղաքներ չունէր, որ քաղաքային տումաններ ընտրէր: Սահմանադիր ժողովին էր մասնակցեր, որ պատգամաւորի համար ընտրական պալքար մղէր: Բանտուրական կեդրոններ չունէր, որպէսզի բանտուրական շարժման թափ տար: Անոր կը մնար վեր յիշուած մտքերը խորացնել մտովին:

Սակայն այդ հատուածը երեք խոշոր մտահոգու-
թիւններ ունէր: Առաջին, միջցեղային կռիւը իր սաստ-
կութեամբ հրապարակ կուգար: Հայաստանը պիտի հա-
յանար . մինչդեռ կովկասեան թաթարները օգտուելով
յեղափոխութեան ընձեռած ազատութենէն, ներկայա-
ցուցիչներ եւ մարմիններ սկսան դրկել Էրզրում եւ
Խնուս, տէր դառնալու մուսլիման ժողովրդին, եւ գա-
նոնք կազմակերպել՝ հայ ժողովրդի թիկունքը հարուա-
ծելու համար: Երկրորդ, Ազգային ազատութեան խնդի-
րը ինքնաբերաբար հրապարակ եկած էր. այդ, յեղափո-
խութեան քաղաքներէն մէկն էր: Տաճկահայութիւնը
համապետական երջանկութեան մասին գրեթէ չէր
մտածեր: Ռուսաստանը իր ճամբայով, մենք կը մտա-
հոգուէինք Տաճկահայաստանի քաղաքական ապագա-
յով: Այս մտահոգութիւնը մեզ կը ստիպէր օր առաջ
քաղաքական կերպարանք տալ հայկական նահանգնե-
րուն: Երրորդ ճակատի ապակուլութեան խնդիրներն
էին: Այս պայմաններու մէջ, ռուսահայ եւ տաճկահայ
գործընկերը, միասին ու ճանբարշխ կը գործէին Տաճկա-
հայաստանի մէջ: Երբ մէկը Բասէնէն եւ Ալաշկերտէն
ներս կը մտնէր, միեւնոյրսը փոխուած կը գտնէր: Հայ-
կական նահանգներու մէջ, գաղթականական, հասարա-
կական եւ գիտնորական աշխատանքները կը տարուէին
մեծ նուիրումով: Հոն տաճկահայ-ռուսահայ
խնդիր գոյութիւն չուներ:

ԿԱՐՕ ՍԱՍՈՒՆԻ



SOURP KEVORK ARMENIAN CHURCH OF LAVAL PRESENTS

Ս. Գեորգ Տալաստանեայց
Առաքելական Եկեղեցին
և Ներկայացնի



PIERE CHAMASSIAN
FRIDAY
JUNE 22



Doors Opens at 7pm
Tickets 30\$
DJ
Chris 24



ELI BERBERIAN & BAND



SUPER SAKO

SATURDAY
JUNE 23

Doors Open at 5pm
6-12: 10\$
12+: 20\$



SURO

Doors Open at 3pm
6-12: 5\$, 12+: 10\$

SUNDAY
JUNE 24

With The
Participation of
ANI DANCE
ENSEMBLE



DJ SAMMY FLASH



SETO ROYAN



JOELLE

Performance Starts at 5pm

FRIDAY NIGHT POKER TOURNAMENT



Registration at 6pm
• BUY-IN \$120
• CASH PRIZES
• OPEN BAR
• OPEN BUFFET
• PRO DEALERS

Info & Friday Night Tickets
ADMIN: 450-688-6795
LENA APRAHAMIAN: 514-928-9910
2865 BOUL. SOUVENIR, LAVAL QC.

@Festivalarmenien
@festivalarmenien

Zone Desjardins
ACCESS TO GAMES & BALLOONS
SATURDAY & SUNDAY



COME HEAR WHAT YOU HAVE BEEN MISSING



TRY HEARING AIDS
RISK-FREE

Call 416 754-4327

699 Coxwell Avenue
Toronto, ON M4C 3C1
Tel: 416 463-4327(HEAR)

Parkway Mall, 85 Ellesmere Road,
#202 Toronto, ON, M1R 4B9
Tel: 416 754-4327(HEAR)

www.hearingaidsource.ca



- Free Hearing Tests
- No obligation Hearing Aid Trial
- Hearing Protection

Images copyright Oticon Canada Ltd.



hearing aid source

invisible, custom & comfortable



Հովանավորությամբ՝ Գերաշնորհ Տ. Բաբգեն Արք. Զարեանի
Առաջնորդ Գանատայի Հայոց Թեմի

Կազմակերպությամբ՝ Ազգային Առաջնորդարանի

ԳԻՐՔԻ ՇՆՈՐՀԱՀԱՆԴԵՍ

Վերապատուելի Տոթթ. Մանուէլ Ճինպաշեանի
The Classical Armenian Bible: Its source and translation technics"

Աշխատասիրութիւնը կը ներկայացնէ
Գերաշնորհ Տ. Անուշաւան Եպս. Դանիէլեան
Առաջնորդական Փոխանորդ՝ Միաջեպոյ Նահանգներու Արեւելեան Թեմի

Հատորը լոյս տեսաւ մեկենասութեամբ՝
Տէր եւ Տիկին Ալպէր եւ Լէյլա Առոյեանի

Երկուշաբթի, 9 Յուլիս 2018
Մուրթեպի Հայ Կեդրոնի «Աւետիս Ահարոնեան» սրահ
Երեկոյեան Ժամը 8-ին



A.C.C. TORONTO

SUMMERFEST 2018

JULY 13 | 14 | 15



FULLY PAID FOR
ONLY \$20 / TICKET



ARMENIAN RELIEF SOCIETY Summerfest Lottery Draw
ONLY 3,000 TICKETS ISSUED - \$20 a ticket
Draw Date: Sunday, July 15, 2018 at 9:00PM
Prize: 2018 Mazda3

FRIDAY | \$25
7:30pm - 2:00am

SATURDAY | \$30
5:00pm - 2:00am
\$20 EARLY BIRD 5:00pm - 7:00pm

SUNDAY | \$20
10:00am - 12:00am
\$15 EARLY BIRD 10:00am - 6:00pm



HAROUT PAMBOUKJIAN
FRIDAY, JULY 13
ԿԻՐԱԾ 13 ԵՈՒԼՍ



RAZMIK AMYAN
SATURDAY, JULY 14
ՇԱԲԱՏ 14 ԵՈՒԼՍ



SAKO
SATURDAY, JULY 14
ՇԱԲԱՏ 14 ԵՈՒԼՍ



ARAM MP3
SUNDAY, JULY 15
ԿԻՐԱԾ 15 ԵՈՒԼՍ



ARPI
SUNDAY, JULY 15
ԿԻՐԱԾ 15 ԵՈՒԼՍ



SUPER SAKO
SUNDAY, JULY 15
ԿԻՐԱԾ 15 ԵՈՒԼՍ



JOELLE
SUNDAY, JULY 15
ԿԻՐԱԾ 15 ԵՈՒԼՍ

LIVE STREAMING THE FINAL FIFA WORLD CUP GAME - SUNDAY, JULY 15th at 11:00AM



MAJOR
PLATINUM
FOOD
SPONSOR



#accsummerfest2018

PLATINUM
SPONSOR





ANI
Ristorante

905.761.6484

1450 Clark Ave. West,
Thornhill ON L4J 7R5

LOOKING FOR FULL TIME CHEF TO GRILL









*Full Dining
Catering
Party Room*
for up to 150 people

www.aniristorante.ca



"Un logis pour tous les besoins"

**RÉSIDENCE POUR AÎNÉS
AUTONOMES ET SEMI-AUTONOMES**

1½ à 4½

**RÉSIDENCE ÉVOLUTIVE
AVEC SERVICES
DE QUALITÉ
À PRIX ABORDABLES**

**PROMOTION
JUSQU'À
2000\$
DE RÉBAIS SUR LES
4% SIGNÉS
AVANT LE
30 JUIN 2018**

12300 boul. Laurentien (angle boul. Gouin) Montréal H4K 2Z6
514-335-1881 • www.manoirgouin.com • location@manoirgouin.com





Concert Classique Բայանիկի Պատանիների Համերգ

Organisé par
**SOCIÉTÉ D'ASSISTANCE AUX ORPHELINS ARMÉNIENS (SOA)
CHAPITRE DE MONTRÉAL**

Համերգը կազմակերպելու է
Մոնրեալի Տեղիականացված Օգնության Միությունը (Հայաստանի օգնությունը)
Համագործակցությամբ զբոսայգիների համագործակցության հետ Տեղիականացված Օգնության Միությունը

Սույն նախագիծը
M. ET MME HABIB & FULDA MALO
Կազմակերպելու է
Տեղիականացված Օգնության Միությունը

Le vendredi 6 juillet 2018 à 19h00

Որոշում, 6 հուլիս, 2018 թվականին ժամը 7:00-ին
Տեղիականացված Օգնության Միությունը

PREMIÈRE ÉGLISE ÉVANGÉLIQUE ARMÉNIENNE
1155 rue Dorval, Montréal, QC H4M 2S6 (Coin l'Assommoir)

Avec la participation de
MME MARINÉ GRIGORYAN (SOPRANO)
M. ELIE BERBERIAN (TENOR)
M. GREGORY CHAHVERDIAN (PIANISTE)

Մասնակցությունը
Մասնակցությունը կազմակերպելու է
Կազմակերպության օգնությամբ
Համագործակցության համագործակցության հետ Տեղիականացված Օգնության Միությունը

Tous billets et information
Համերգի տեղեկությունները համարժեցիկ կերպով հասանելի է

MS. MARINA GARABEDIAN 438.990.009
MS. ANI DANIELIAN 514.587.7480
DR. SARKIS VERETSIAN 514.836.1562

Տեղեկություններ
Համերգի 125

ՄԱՆՐԱՆԿԱՐ «Ամօ՛թ քեզի»

Վաղարշակը լաւ պատմող է, շատ լաւ պատմող: Ան նաեւ դպրոցական իմ հիւն ընկերս է, ինձմէ քանի մը դասարան վեր: Զինք կը յիշեմ միշտ կաղանդի կամ գատկուան հանգէսներէն, քանի որ ան անպայման բեմին վրայ պիտի գտնուէր, գաւեշտական դերի մը մէջ՝ «Աբխոզոմ աղա», «Դուռմի վաճառականը» եւ այլն: Կը սպասէինք իր այդ ելոյթներուն՝ կուշտ ու կուռ խնդալու համար:

Վաղարշակը, բախտի բերումով՝ եղաւ նաեւ երկարամեայ թաղակիցս, ուստի պարբերաբար զիրար տեսնելու առիթ ալ կ'ունենանք, մանաւանդ երբ ելեկտրական կամ ելեկտրոնիկ սա կամ նա սարքը նորոգելու կամ գործարկելու կարիքը ըլլայ: Այդ պարագաներուն աւելի լաւ է վստահիլ անո՛ր, քան թէ իմ հմտութեան... Սակայն նման առիթները պատրուակներ են պարզապէս՝ քով-քովի գալու, գաւաթ մը սուրճ առնելու եւ վերլիշելու՝ համար:

— Ինչպէ՞ս կ'առնես սուրճը, — ձայն կու տայ ներսէն կինս:

— Մազպու՛ւթ, — կ'ըլլայ պատասխանը միշտ, այսինքն «ճիշտ», ինչպէս պէ՛տք է ըլլայ՝ ոչ շատ քաղցր, ոչ ալ շատ լեղի:

Ահա այս անգամ ալ, երբ մեր նոր յարկաբաժնի մէկ լուսամտի մը նորոգելու եւ հեռատեսիլի կազմածը, իր բազմաթիւ լարերով ու միացումներով «հանգուցալուծելու» եկած էր Վաղարշակ, սուրճին պէս «մազպու՛ւթ» դէպք մը վերլիշեց, երբ հարց տուինք իրեն, թէ միշտ գաւեշտ խաղացած է, թէ՞ նաեւ տրամա:

— Գոմետի՛, գոմետի՛, ես ուրիշ բան չեմ խաղար: Այդ չի նշանակեր, որ ուրիշ բան չեմ խաղացած, սակայն այդ դէպքէն ի վեր երդում ըրած եմ, որ տրամա չեմ խաղար, — յայտարարեց ան՝ թաւ յօնքերը վեր առնելով ու աջ ցուցամատը թափահարելով:

— Ի՞նչ դէպք, Վաղարշակ:

— Կ'երեւի հոն չէիք, չէք տեսած:

— Զէ, տեսած ըլլալու չենք, պատմէ՛:

Եւ Վաղարշակ լուրջ-լուրջ պատմեց հետեւեալը: Ապրիլ 24-ի հանդիսութիւն էր: Այդ օրերուն նման ձեռնարկներու շատ աւելի կարեւորութիւն կը տրուէր, մե՛ծ պատրաստութիւն կը տեսնուէր: Եկեղեցւոյ ներքեւի սրահին մէջ պիտի ըլլար ձեռնարկը: Սելման ստանձնած էր պատշաճ պատկեր մը ներկայացնել, մի քանի հոգի հաւաքած էր շուրջը, շատ պնդեց, որ ես ալ մաս կազմեմ այդ խումբին. Շիտակը ըսելու համար՝ չկրցայ մերժել, — զիս գովեց, գովեց, ինքնասիրութիւնս շոյեց, ու թէեւ ես ատանկ բաներու շատ կարեւորութիւն չեմ տար, սակայն ինկայ թակարդը. Զկրցայ «ոչ» ըսել: Միւս կողմէ ալ պարտականութիւն էր...

Տեղէ մը փոքր կտոր մը գտեր էր՝ Գրիգոր Զօհրապի վերջին գիշերը, երբ ան իր պաշտօնակից երեսփոխան Թալէաթ փաշային հետ նարտ պիտի խաղար, թաւու՛:

— Դուն Թալէաթը պիտի ըլլաս, — ըսաւ: Այդպէս ալ եղաւ, զիս լաւ մը դիմաւարդանք, մեծ պիտիք փակցուց, ճիշտ ու ճիշտ Թալէաթ փաշա դարձայ:

Վարագոյրը բացուեցաւ, մեքն նստած էինք նարտ խաղալու, լարուած էր խաղը, կ'ուզէի լաւ դաս մը տալ Զօհրապին, սակայն ջանքերս ի գուր անցան, շանորդի հայր յաղթեց ինձի. վիրաւորական էր: Վերադառնալու ազնուարար հագցնելու ու զինք նամբու դնելու ետք, կանչեցի գործակատարս ու հրահանգեցի, որ Զօհրապն ալ աւելցնէ յաջորդ օրը ձերբակալուելիք ու կախաղան հանուելիք հայ մտաւորականներու ցանկին վրայ:

Այդ պահուն, յանկարծ, բեմին ճիշտ առջեւը նստած տիկին մը գայլոյթով գոռաց.

— Ամօ՛թ քեզի, ամօ՛թ, դուն թո՛ւրք ես, ինչ ես, թո՛ւ, թո՛ւ...

Ես շշմեցայ. Ի՞նչ ընելու չէի գիտեր: Արիւնս գլուխ ցատկեց, ամբողջ մարմնով կը դողայի, քիչ

մնաց բեմէ վար պիտի իյնայի: Դեր մըն էր խաղացածս, ինչո՞ւ նման անարգանքի պիտի ենթարկուէի՝ թուի՛ր՝ պիտի արժանանայի: Ինքզինքիս եկայ, կամաց մը ետ քաշուեցայ, բեմին ետեւը անցայ, մինչ ծափերը սկսան տեղալ: Միւս խաղացողները գացին առջեւ, խոնարհութիւնը կատարեցին, ես տեղէս չշարժեցայ: Ծափերը կ'որոտային, ես վարագոյրին ետեւ մնացի:

Հանդէսի աւարտին, երբ մարդիկ կը գրուցէին, այդ տիկինն ալ եկաւ ու ներողութիւն խնդրեց, — «կը ներես, ըսաւ, շատ տարուեցայ»...

— Ա՛յդ էր, անկէ ետք մէյ մըն ալ տրամա չեմ խաղացած, — հաստատեց Վաղարշակ:

— Բայց ատիկա քու վարպետութիւնդ ըլլալու էր, այնքա՛ն լաւ ներկայացուցեր ես հրէշին կերպարը...

— Զէ՛, ես մարդ նեղացնելու, մարդ աւելի յուզելու համար բեմ չեմ կըլեր: Արդէն մեր կեանքերը մէյ մէկ տրամաներ են, աւելի լաւ է հանդիսատեսները խնդացնեմ, ուրախացնեմ, քան թէ տխրեցնեմ, զայրացնեմ...

ՎՐԷԺ-ԱՐՄԷՆ

Յ.Գ. Այս գրութիւնը կարդալէ ետք, բարեկամս՝ բժ. Արմենակ Եղիայեան հետեւալը կը վերլիշեցնէ — Գուրգէն Մահարի կը պատմէ Վանի մէջ խաղացուած «Օթելլո» մը, որուն դերակատարներուն մէկ մասը, ինչպէս՝ Եակոն, տեղւոյն վրայ ճարուած դերասաններ են: Ներկայացման օրը ներկայ է Եակոյին հայրը եւս: Ի տես գաւկիւն սադայէական արարքներուն՝ մարդը կէս կը ձգէ ներկայացումը ու զգուսնով ու ամօթահար (որ այդպիսի նեք գաւակ մը ունի) կ'ելլէ տունը կ'երթայ: Ու երբ գաւակը վերջապէս տուն կը հասնի, կ'իջնէ անոր վրայ՝ «անկի՛րթ, անամօթ, ստոր արարած, անուննիս սեւցուցիր, ինչպէ՞ս կարելի էր այդքան նեքութիւն ի գործ դնել հարազատ ընկերոջ մը հանդէպ»... ու այսպիսի բաներ:



Թորոնթոյի «ՆՈՐ ՀԱՅ ՀՈՐԻԶՈՆ»
յատագիրը կարելի է դիտել -

Շաբաթ առաւօտեան ժամը 9:00-10:00
Կիրակի առաւօտեան ժամը 6:00-7:00
Երեքշաբթի կէսօրոյ ժամը 12:00-1:00
Հինգշաբթի երեկոյեան ժամը 10:00-11:00

OMNI 1 կայանէն:

Մարտ 5-էն սկսեալ, «Հայ Հորիզոն» հեռատեսիլի
յայտագիրը պիտի սփռուի հետեւեալ կայաններուն
եւ ժամերուն, մէկ ժամուայ տեւողութեամբ:

Videotron:
HD838 կամ SD238
Bell Fibe:
HD1216 կամ SD216

Երեքշաբթի - երեկ ժամը 9:00-ին (առաջին սփռում)
Չորեքշաբթի - կ.է. ժամը 2:00-ին
Հինգշաբթի - երեկ ժամը 6:00-ին եւ առաւօտեան ժամը 12:30-ին
Շաբաթ - առ. ժամը 7:00-ին եւ երեկ ժամը 11:00-ին
Կիրակի - առ. ժամը 6:00-ին, կ.է. ժամը 4:00-ին եւ առ. ժամը 1:00-ին
Երկուշաբթի - առ. ժամը 6:00-ին, կ.է. ժամը 5:00-ին եւ
առ. ժամը 1:00-ին
Ուղիղ արձակում՝ www.icitelevision.ca

Ghadir Meat & Restaurant

T. 416-750-7404
T. 416-750-7400
1848 Lawrence Avenue E.
Scarborough, ON M1R 2Y4
E-mail: info@ghadirmeatmarket.com

BAKERY AND FINE FOODS

OPEN 7 DAYS A WEEK!
WEEKDAYS 9am - 7pm
SATURDAY 9AM - 6PM
SUNDAY 9AM - 3PM

LOCATION: 2094 LAWRENCE AVENUE EAST
ON THE NORTH-EAST CORNER OF LAWRENCE AND WARDEN

Noor Fine Food
Gourmet Mediterranean Cuisine

1 High Meadow Place, Unit 9
Toronto, Ontario M9L 2Z5

Tel 416 745 3111
Fax 416 745 9337

ANI Restaurant

905.761.6484

1450 Clark Ave. West,
Thornhill ON L4J 7R5

Sutton

Sutton Group-Admiral Realty Inc., Brokerage
1206 Centre Street, Thornhill, Ontario L4J 3M0

Annie Varbedian
Sales Representative

Direct: (416) 918-3615
Office: (416) 739-7200
Fax: (416) 739-9367
annievarbed@hotmial.com
www.suttongroupadmiral.com

hearing aid source

Andre Ayvazyan HIS B.A.S.

andre@HearingAidSource.ca
416 754 4327 (HEAR)

Parkway Mall, 85 Ellesmere Rd., #65, Toronto, ON, M1R 4B9

Crown Pastries
Fine Middle Eastern Pastries

2086 Lawrence Ave East (Lawrence & Warden)
Toronto ON. M1R 2Z5

Tel 647.351.2015
www.crownpastriesbaklava.com

I.D.A.
Part of the **Royal** family of pharmacies.

Cassandra Pharmacy Inc.

2040 Victoria Park Ave.
Toronto, Ontario
M1R 1V2

Pharmacists
Sarkis Balian
Vartan Balian
Maral Abdalian Balian

Tel. : **416.449.2040**
Fax: **416.449.2048**

ANI BAKERY
ԱՆԻ ՓՈԱՊԱՆ

